**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**15 նոյեմբերի 2025թ.** **N 73-Ա**
**ք. Երևան**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## «ԱՆԿԱԽ ԴԻՏՈՐԴ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Դ.ԻՈԱՆՆԻՍՅԱՆԻ 13.11.2025Թ. N 3231 ԴԻՄՈՒՄՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ

Ուսումնասիրելով «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի լիազոր ներկայացուցիչ Դ. Իոաննիսյանի 13.11.2025թ. N 3231 դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

## Պ Ա Ր Զ Ե Ց.

***1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը***

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի լիազոր ներկայացուցիչ Դ.Իոաննիսյանի 13.11.2025թ. N 3231 դիմումում նշված է.

««Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդների կողմից կատարվել են հայտարարություններ, որոնցով արտահայտվում է կանխակալ դիրքորոշում և նախապատվելի վերաբերմունք իշխանության կամ ընդդիմության, այդ թվում՝ Վաղարշապատ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վերաբերյալ, ինչպես նաև հստակ աջակցություն է արտահայտվում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մրցակիցների դեմ և ընդդիմադիրների օգտին:

Դիտորդ Գոհար Մելոյան Հարցազրույց Վաղարշապատում, նոյեմբերի 8-ին «Ի՞նչ օրակագրով եք Վաղարշապատում»,- հարցնում է լրագրողը, ինչին Գոհար Մելոյանը պատասխանում է. «Վերջին շրջանում, կարծում եմ, Վաղարշապատում անընդհատ օրակարգ ունենք ներկա գտնվելու, որովհետև Էջմիածին քաղաքում քրիստոնյաներիս գտնվելու օրակարգը արդիական դարձրեց իշխող ուժի ղեկավարը, երկրի վարչապետը՝ հարձակվելով եկեղեցու վրա...Այս օրերը դառնալու են դասագրքային օրինակ, թե ինչպես չի կարող գործել որևէ պետության ղեկավար...»:

«Ես ճի՞շտ հասկացա, որ դուք կարծում եք՝ ընդդիմադիր ուժի հաղթանակով հնարավոր կլինի կանխել իշխող ուժի արշավը եկեղեցու նկատմամբ». «Մեր մյուս օրակարգը Վաղարշապատում սպասվող ընտրություններն են... Եկեղեցու նկատմամբ հետապնդումները ծայրաստիճան հակասահմանադրական, հակաիրավական գործընթաց է, որը թույլ են տալիս այսօրվա իշխանությունն ու իշխանության ներկայացուցիչները»: https://www.youtube.com/watch?v=Ulg6SHdb3us

Դիտորդ Գառնիկ Դավթյան «Մեր ձևով» շարժման անդամ է: «Ունիկալ ստախոսությունը դարձել է ՔՊ-ի միակ լավ բանը, որը նրանց մոտ ստացվում է վերջին շրջանում»,- այսպիսի բովանդակությամբ գրառում է կատարել նա նոյեմբերի 12-ին: https://www.facebook.com/garnik.m.davt.yan/posts/pfbid02gP2coDaiW9DiiToRsrR4kTWp2NBpmp6JBG7eoEhXr1LRbsJkEutqAYe41dWPSfRjl

Դիտորդ Անդրանիկ Գևորգյան Այս դիտորդը ևս «Մեր ձևով» շարժման անդամ է: Նոյեմբերի 11-ին նա ակնհայտ քարոզչություն է իրականացրել հենց Վաղարշապատում՝ լրագրողին տրված հարցազրույցում հայտարարելով. «Պիտի վաղարշապատցիներին ամենակարևոր մեսիջը ուղղենք, որ պետք է մասնակցել ընտրություններին, պետք է բարձր մասնակցություն ապահովել, դա շատ կարևոր է այս պահին, և իրենց քվեն տալ, իրենց ձայնը տալ ընդդիմադիր գործչին, ընդդիմադիր թեկնածուին, ռեալ ընդդիմադիր գործիչներին, որպեսզի կարողանանք հասնել արդյունքի»: https://www.facebook.com/reel/4057395637907717

Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգիրք») 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝ (…) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, որոնց կառավարման մարմնի կազմում, բացառությամբ ժողովի, որևէ ներկայացուցիչ չի մասնակցում տվյալ ընտրություններին թեկնածուի կարգավիճակով, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:

Օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի՝

Դիտորդը, այցելուն իր իրավունքներն իրականացնելիս պարտավոր է լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել իշխանության կամ ընդդիմության, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կապված որևէ հարցի նկատմամբ:

Այսպիսով, օրենսդիրն աներկբա կերպով արտահայտել է իր կամքն առ այն, որ թեկնածուին կամ ընտրություններին մասնակցող որևէ կուսակցությանն աջակցելու դեպքում անձը չի կարող իրականանացնել դիտորդություն, քանի որ դիտորդների՝ Օրեսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված բոլոր իրավունքները, որոնք չունեն այլ անձինք, իրացվում են տեղամասային կենտրոնում կամ ընտրական հանձնաժողովի նիստի ժամանակ:

Այլ կերպ ասած, օրենսդրի կամքը հստակ է՝ անձը, ով թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող որևէ կուսակցությանն աջակցում է, չի կարող օգտվել դիտորդի իրավունքներից և չի կարող լինել դիտորդ:

Օրենսգիրքը, ըստ էության, երկու մեխանիզմ է նախատեսում, որոնցով անձը դադարում է լինել դիտորդ՝ մեկն ամբողջ դիտորդական առաքելության գրանցումն ուժը

կորցրած ճանաչելն է, մյուսը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հավատարմագրված դիտորդների ցանկից անձի վերաբերյալ տվյալների հեռացումը:

Ինչպես պարզ է դառնում վերը բերված փաստերից, վերոնշյալ դիտորդները խախտել են Օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կանոնները՝ ստեղծելով Օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ տեղամասային կենտրոնից և ընտրական հանձնաժողովի նիստից հեռացվելու հիմքերը:

Անգամ ավելին, «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության հավատարմագրած դիտորդ Անդրանիկ Գևորգյանը նաև իրականացրել է Օրենսգրքի 19-րդ հոդվածի 1.1 մասով սահմանված նախընտրական քարոզչություն՝ չունենալով դրա իրավունքը: Դա, իր հերթին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանք է:

Դիմումատուն խնդրում է.

«1. «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից հավատարմագրված դիտորդների ցանկից հանել Գոհեր Մելոյանի, Անդրանիկ Գևորգյանի և Գառնիկ Դավթյանի մասին տվյալները:

2. Կազմել դիտորդ Անդրանիկ Գևորգյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն և համապատասխան հայցադիմում ներկայացնել վարչական դատարան:»:

**2. <u>Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը</u>**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում:»:

Վերոհիշյալ նորմերից բխում է, որ ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերը կիրառելի են միայն Ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի իրականացման առանձնահատկություններից է նաև Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը, որի համաձայն՝

«Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումները, իրավունքի չարաշահմամբ ներկայացված դիմումները, ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները, ինչպես նաև սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջների խախտմամբ ներկայացված դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում, և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին: Այդ դեպքում ընտրական հանձնաժողովն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ իրականացնելու վարչական վարույթ»:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:»:

ՀՀ Սահմանադրության նշված հոդվածը հստակ և աներկբա ամրագրում է, որ վարչական մարմիններից պատշաճ վարչարարություն հայցելու իրավունքից անձը կարող է օգտվել միայն ***իրեն առնչվող գործերով***:

Ելնելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի իրացմանը ներկայացվող պահանջներից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի իրավակարգավորումների հիմքում դրվել է նույն տրամաբանությունը:

Բողոքին կամ դիմումին ներկայացվող պահանջներից է դիմումը կամ բողոքը իրավասու անձի կողմից ներկայացված լինելը: Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդիրն առանձնացնում է սուբյեկտների հինգ խումբ, որոնց իրավունք է վերապահում բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը): Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված՝ դիմում, բողոք ներկայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների ցանկում հասարակական կազմակերպությունը նշված չէ:

Վերոգրյալից ակնհայտ է, որ դիմումատու «Անկախ դիտորդ» հասարակական կազմակերպությունը չի հանդիսանում դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ, ուստի կազմակերպության անունից ներկայացված դիմումը չի համապատասխանում Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի լիազոր ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանի 13.11.2025թ. N 3231 դիմումով վարչական վարույթի հարուցումը մերժել:

2. 13.11.2025թ. N 3231 դիմումով ներկայացված հանգամանքները պարզելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցել վարչական վարույթ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**